

Ոսկյա իրերի գրավով ապահովված չվերականգնվող սահմանաչափով վարկային քարտեր
Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 11.07.2018թ.

Վարկային քարտը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ՀՀ քաղաքացի և/կամ ռեզիդենտ անձանց (այսուհետ՝ Հաճախորդ):

Վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում և մասնաճյուղերում ԱրՔա Կլասիկ քարտի միջոցով, որը հետագայում այլ նպատակների համար չի կարող օգտագործվել: Քարտերի տրամադրման և օգտագործման կանոնները ներկայացված են [կայքում](#):

Քարտի վարկային սահմանաչափը կարող է օգտագործվել տրամադրման օրվանից հաշված 1 ամսվա ընթացքում:

Մարումը սկսվում է սահմանաչափի օգտագործման վերջնաժամկետի ավարտից հետո՝ հաճախորդի կողմից վերջինիս հետ կնքված պայմանագրում նշված մարման նախընտրելի մոտակա օրվանից:

Քարտի արժույթը	ԱՄՆ դոլար Եվրո
Վարկային սահմանաչափի նվազագույն մեծությունը	50,000 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար/ եվրո
Քարտի պատրաստման և տրամադրման ժամկետը	2 - 4 աշխատանքային օր
Վարկային սահմանաչափի տրամադրման միանվագ վճար	Մինչև 1 մլն ՀՀ դրամը ներառյալ համարժեք ԱՄՆ դոլար/ եվրո՝ սահմանաչափի գումարի 1% 1 մլն ՀՀ դրամից ավելի համարժեք ԱՄՆ դոլար/ եվրո՝ սահմանաչափի գումարի 0.5%

Մարման եղանակ	Մարման ժամկետ	Վարկ/Գրավ	Տարեկան պարզ տոկոսադրույք	
			ԱՄՆ դոլար	Եվրո
Անուիտետային մարման տարբերակով	6 – 36 ամիս ներառյալ	100%	12%	10%
Վարկի տոկոսները յուրաքանչյուր ամիս, իսկ մայր գումարը ժամկետի վերջում վճարելու պայմանով	3 – 6 ամիս ներառյալ	95%	13%	11%
Վարկի տոկոսներն ամբողջությամբ նախապես, իսկ մայր գումարը ժամկետի վերջում վճարելու պայմանով	3 – 6 ամիս ներառյալ	100%	11%	10%
	6 – 8 ամիս ներառյալ	98%	14%	12%

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
 Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 511 211

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	5,000 ԱՄՆ դոլար
Անվանական տոկոսադրույք	12%
Մարման ժամկետ	24 ամիս
Մարման տեսակ	անուիտետային

Մարումների հետ կապված գումարները կկազմեն՝

Անսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	235.37
Ընդհանուր տոկոսագումար	648.82
Մարումների հանրագումար	5,648.82

Սահմանափակումներ

- Տրամադրվում է միայն ոսկու գրավով ապահովվածության դեպքում

Վարկի ժամկետի երկարաձգում

Վարկի ժամկետը կարող է երկարաձգվել բացառապես Բանկի որոշման հիման վրա, համաձայն երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող վարկավորման պայմանների և սակագների, այն դեպքում, երբ՝

- Վարկառուն Վարկի երկարաձգման պահի դրությամբ մարել է Վարկի մարման ժամանակացույցով սահմանված բոլոր տոկոսագումարները և մայր գումարի առնվազն 50%-ը
- Վարկառուն Վարկի երկարաձգման պահին Բանկում չունի ժամկետանց պարտավորություններ
- մինչև 1 մլն ՀՀ դրամին համարժեք գումարով Վարկերի դեպքում վերջին մեկ տարվա ընթացքում Բանկում վարկառուի գործող բոլոր վարկերի գծով ժամկետանց պարտավորությունները չեն գերազանցել 60 օրը, և վարկառուն վերջին մեկ տարվա ընթացքում Բանկում չի ունեցել և չունի վարկային պարտավորություններ, որոնք դասակարգվել են:
- 1 մլն և ավելի ՀՀ դրամին համարժեք գումարով Վարկերի դեպքում ԱԶՌԱ վարկային բյուրոյին կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ Վարկառուի գործող բոլոր վարկերի գծով ժամկետանց պարտավորությունները չեն գերազանցել 60 օրը, և վարկառուն վերջին մեկ տարվա ընթացքում չի ունեցել և չունի վարկային պարտավորություններ, որոնք դասակարգվել են:

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ սահմանված չեն:

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԶՌԱ Քրեդիտ Բեփորթինգ» ՓԲԸ-ին: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձել և իրացնել գրավադրված գույքը և գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին մարել Հաճախորդի վարկային պարտավորությունները:

Հաճախորդի վարկային պարտավորությունները մարելու համար գրավի իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

1	Դիմում - հայտ
2	Անձը հաստատող փաստաթուղթ
3	Հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Վարկառուն բանկի պահանջով իր վարկային պարտավորությունը ապահովում է գրավով
- Վարկառուն չունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ:

Վարկառուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման որոշման կայացումը և Հաճախորդի իրազեկումը իրականացվում է դիմելու նույն օրը:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
 Էլ. փոստ՝ info@fsm.am
 Հեռախոս՝ (+37460) 70-11-11
 Ֆաքս՝ (+37410) 58-24-21**